ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/6Շ-2

ք. Երևան «02» 04 2025թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Ադամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ-7, /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ47+100-կմ48+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված թիվ 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

1.4 Պայմանագրի կատարումը փուլային չէ և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված է պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝ շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով սահմանված Մ-7, /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ47+100-կմ48+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման արդյունքի կամ դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) նկատմամբ երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին:** Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման

համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **192 000 000** (մեկ հարյուր իննսուներկու միլիոն) ՀՀ դրամ, որից **32 000 000** (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը Տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

№	Խախտումը	Պատասխանատվությունը *	Խախտումը վերացնելու համար տրամադրվող ժամկետները	Խախտումը կրկնվելու դեպքում տրամադրվող ժամկետները
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն կամ ձեռք բերման պայմանագիր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	3 օր	Չի տրամադրվում
3	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	1) Շին. աղբի մասով – Չի տրամադրվում 2) Կենցաղային թափոնների և օտար առարկաների մասով – 1 օր
4	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի բերրի շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	2 օր	Չի տրամադրվում
5	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված և/կամ համապատասխան	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում

	լիազոր մարմնի կողմից տրված թույլատվության դեպքերում)			
6	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
7	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
8	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1) Նշանների մասով – 3 օր 2) Լուսաազդանշանային առկայծող լապտերների մասով - առավելագույնը - 12 ժամ	1) Թեքված, ծռված, վնասված, բացակայող ճանապարհային նշանների վերականգնման համար – 1 օր: 2) Վնասված լուսաազդանշանային առկայծող լապտերների վերականգնման համար – 4 ժամ:
9	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
10	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
11	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
12	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	4 ժամ	1 ժամ
13	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	2 ժամ	Չի տրամադրվում
14	Շինարարական սորուն նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում

15	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով	24 ժամ	4 ժամ

6.5.2 Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

6.5.3. Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսից, իսկ առավելագույնը 1 (մեկ) տոկոսից:

6.5.4. Պայմանագրով սահմանվող պատասխանատվության միջոցների աղուսյակում նշված բոլոր խախտումների համար տուգանքի տոկոսների հանրագումարը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր գնի 10 (տաս) տոկոսը, իսկ 10 (տաս) տոկոսը գերազանցելու դեպքում պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

6.5.5 Տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ

բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 **Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն**

նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3, ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՀ 900011025823 ՀՎՀՀ 02815457 Գլխավոր քարտուղար՝ Ա. Երիցյան	«ՄԵՐԶՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան շրջկենտրոն «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ ՀՀ 2050122011531001 ՀՎՀՀ 05800698 Տնօրեն՝ Ա. Արսենյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 02 » 04 2025թ. կնքված
«ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/6Շ-2 » ծածկագրով պայմանագրի

ՉԱՓԱԲԱԺԻՆ 2

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ – ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-7, /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ47+100-կմ48+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	I Հողային աշխատանքներ				
1	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0 մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ³	754.16	2.475	1866.546
2	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. տեղափոխում պատգարակով 20 մ լիցք (հարթում.ջրում. խտացում)	մ³	25.40	9.048	229.819
	մեք. կայանման գրպաններ				
3	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0 մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ³	66.6	2.475	164.835
4	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ³	3.51	9.763	34.268
				I Ընդամենը	***2295.468***
	II Կողային առու				
1	Կողային առվի իրականացում 10e-IVկարգի բնահողում էքս 0.65մ3 շ.տ.. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ մի. Հեռ	մ³	87.49	2.562	224.149
2	Կողային առվի մշակում և բարձում ձեռքով 10e-IV կարգի բնահողում ա/ի վրա.տեղափոխում լցակույտ 10կմ միջ հեռ.	մ³	4.61	9.763	45.007
	Կողային առվի ամրացում. բետ. սալերով Ճ-8 (49x49x8) սմ				
1	Կողային առվի ամրացում. բետ. սալերով Ճ-8 (49x49x8) սմ Խճային շերտ h=10սմ	հատ	1800	5.324	9583.200
2	Կողային առվի մշակում և բարձում ձեռքով 10e-IV կարգի բնահողում ա/ի վրա.տեղափոխում լցակույտ 10կմ միջ հեռ.	մ³	81	9.763	790.803
				II Ընդամենը	***10643.160***
	III Երթևեկելի մաս				
1	Ճ տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h= 5 սմ. ԳՕՍՏ 9128-2013	մ²	6654.7	6.509	43315.442
2	Ճ տիպի խոշորահատիկ ա/բ h=6սմ. ԳՕՍՏ 9128-2013	մ²	6654.7	7.158	47634.343
3	Տեղում սառը եղանակով վերամշակում h=20 սմ (1մ² - 16 կգ ցեմենտի խառնումով)	մ²	6654.7	3.177	21141.982
4	Խճի հավելանյութ h=միջ5 սմ (0- 5) սմ	մ³	43.08	5.266	226.859
5	Հիմքի մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ2. ԳՕՍՏ Ռ 58952.1-2020	մ²	6654.7	0.381	2535.441
	Մեքենաների կայանման գրպաններ				

1	Б տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h= 5 սմ. ԳՕՍՏ 9128-2013	մ²	305	6.509	1985.245
2	Б տիպի Խոշորահատիկ ա/բ h=6սմ. ԳՕՍՏ 9128-2013	մ²	305	7.158	2183.190
3	Խճավազային հիմք C-5 h=12սմ. ԳՕՍՏ 25607-2009 խիճ (40-70)- 10% - 1.56մ3 խիճ (20-40)- 35% - 5.46մ3 խիճ (10-20)- 20% - 3.12մ3 խիճ (5-10)- 10% - 1.56մ3 խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ3 ջուր-1.1մ3	մ²	305	1.471	448.655
4	Հիմքի մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ2. ԳՕՍՏ Ռ 58952.1-2020	մ²	305	0.381	116.205
				III Ընդամենը	***119587.362***
	IV Կողնակ				
1	Կողնակների իրականացում ավազակոպճային նյութով h= 11 սմ	մ²	896.2	1.22	1093.364
				IV Ընդամենը	***1093.364***
	V Իջափեղեր և մուտքեր				
1	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդ.. տեղափոխում 50մ կուտակումով. բարձում ա/ի էքս. 0.65 մ3 շ.տ. և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. Հեռ	մ³	127.93	2.886	369.206
2	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ³	6.73	9.71	65.348
3	Б տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ. ԳՕՍՏ 9128-2013	մ²	849.6	5.121	4350.802
4	Խճավազային հիմք C-5 h=12սմ. ԳՕՍՏ 25607-2009 խիճ (40-70)- 10% - 1.56մ3 խիճ (20-40)- 35% - 5.46մ3 խիճ (10-20)- 20% - 3.12մ3 խիճ (5-10)- 10% - 1.56մ3 խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ3 ջուր-1.1մ3	մ²	849.6	1.428	1213.229
5	Հիմքի մակերեսի մշակում բիտումային էմուլսիայով 0.6լ/մ2. ԳՕՍՏ Ռ 58952.1-2020	մ²	849.6	0.37	314.352
6	Մետ. խողովակներ Ø 530/7մմ տեղադրում	գծմ	5.0	135.187	675.935
7	Ավազակոպճային շերտ h=10սմ (խողովակի տակ)	մ³	0.325	10.657	3.464
8	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) Ø530մմ	գծմ	4.4	3.407	14.991
9	Միաձույլ բետոնե B-20 գլխամասերի կառուցում	մ³	0.8	126.723	101.378
10	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) Ø530մմ	մ²	3	1.353	4.059
11	**Գոյություն ունեցող խողովակների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը**				
	> մետ. Խող. Ø 0.273մ	գծմ	74.40	1.417	105.425
				V Ընդամենը	***7218.188***
	VI Ջրընդունիչների կառուցում իջափեղերում և մուտքերում				
	Ջրընդունիչ 204 գծ մ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	14.28	10.617	151.611
2	Միաձույլ բետոն B-20	մ³	24.48	129.799	3177.480
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	155.04	1.348	208.994
4	Ամրաններ				

	Ø12 A-500C L = 550 մմ	կգ	597.80	0.52	310.856
	Ø8 Ac-I L = 1000 մմ	կգ	402.9	0.62	249.798
	Ø12 A-500C L = 390 մմ	կգ	847.791	0.52	440.851
	Ø12 A-500C L = 1000 մմ	կգ	724.608	0.52	376.796
5	Ցանց				
	L 70x7 L = 1000 մմ	կգ	3015.12	0.832	2508.580
	L 63x6 L = 996 մմ	կգ	2324.425	0.832	1933.922
	L 63x6 L = 450 մմ	կգ	1050.192	0.832	873.760
	Ø25 A-500C L = 434 մմ	կգ	5453.818	0.832	4537.577
6	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	16.32	7.097	115.823
7	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձումը էքս 0.65մ³ շտ-ի ա/ի վրա տեղափոխում լցակույտ 10 կմ միջին հեռավորությամբ	մ³	57.12	2.538	144.971
8	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	16.32	2.429	39.641
				VI Ընդամենը	***15070.658***
	VII Միաձույլ ե/բ ջրընդունիչի կառուցում մետ ցանցով կմ 47+532.6 իջապեղում և կմ 47+ 855.8 մուտքում				
	Ջրընդունիչ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	2.87	10.617	30.471
2	Միաձույլ բետոն B-20	մ³	4.72	129.799	612.651
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ²	31.16	1.348	42.004
	Ամրաններ				
4	Ø12 A-500C L = 550 մմ	կգ	120.146	0.52	62.476
5	Ø8 Ac-I L = 1000 մմ	կգ	80.975	0.62	50.205
6	Ø12 A-500C L = 390 մմ	կգ	170.389	0.52	88.602
7	Ø12 A-500C L = 1000 մմ	կգ	145.632	0.52	75.729
	Ցանց				
8	L 70x7 L = 1000 մմ	կգ	605.98	0.761	461.151
9	L 63x6 L = 996 մմ	կգ	467.164	0.761	355.512
10	L 63x6 L = 450 մմ	կգ	211.068	0.761	160.623
11	50x10մմ L = 434 մմ	կգ	767.277	0.761	583.898
12	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	3.28	7.097	23.278
13	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձումը էքս 0.65մ³ շտ-ի ա/ի վրա տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռավորությամբ	մ³	11.48	2.538	29.136
14	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	3.28	2.429	7.967
15	կմ 47+514-կմ 47+544 Գոյություն ունեցող մոնոլիտ ե/բ վաքերի քանսում հարվածքիատ մուրճով բարձում ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 10 կմ	մ³	2.08	40.353	83.934
16	կմ 47+514-կմ 47+544 Գոյություն ունեցող ջրընդունիչի մետ. ցանցի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջ	կգ	1837.94	0.072	132.332
				VII Ընդամենը	***2799.968***
	VIII Մայթեր				
1	Հավաքովի բետոնե եզրաքարի (15x30)սմ քանդում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	810.5	1.607	1302.474
2	Հավաքովի բազալտե եզրաքար 15x30սմ ԳՕՍՏ 32018-2012. ԳՕՍՏ 32961-2014	գծմ	847.1	13.642	11556.138

	- միաձույլ բետոնե հիմք B-15 1գծմ-0.035 մ3 - ավազակոպճային շերտ h=5սմ 1գծմ-0.0125 մ3				
3	Հավաքովի բետոնե եզրաքար 15x30սմ ԳOUS 32018-2012. ԳOUS 32961-2014 - միաձույլ բետոնե հիմք B-15 1գծմ-0.035 մ3 - ավազակոպճային շերտ h=5սմ 1գծմ-0.0125 մ3	գծմ	11	8.233	90.563
4	Միաձույլ բետոնե եզրաշարի (10x20) սմ քանդում էքս. 1.0մ^3 շ.տ.. բարձում ա/հ-ի վրա տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ. վրա	մ^3	14.93	2.634	39.326
5	Միաձույլ բետոնե եզրաշարի տեղադրում (20x40)սմ . ավազակոպճային շերտ h=5սմ 1գծմ-0.01մ3	գծմ	43.5	5.995	260.783
6	Միաձույլ բետոնե եզրաշարի տեղադրում (30x60)սմ . ավազակոպճային շերտ h=5սմ 1գծմ-0.015 մ3	գծմ	13.6	13.388	182.077
7	Միաձույլ B-15 բետոնե եզրաշարի կառուցում 10x20սմ - ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ-0.005մ3	գծմ	739.6	1.532	1133.067
8	ծածկի կառուցում h=6սմ բետոնե սալիկներով	մ^2	1124.085	9.146	10280.881
9	Ցեմենտ-ավազային շերտ h=9սմ (10% ցեմենտ. 90% ավազ)	մ^2	1124.085	2.56279	2880.794
10	***Թեք հարթակներ***				
	Նոր բազալտե (8x20սմ) եզրաշարերի տեղադրում միաձույլ բետոնե հիմք. B-15 1գծմ-0.048մ3. ավազակոպճային շերտ h=5սմ. 1գծմ - 0.014 մ3.ԳOUS 32018-2012. ԳOUS 32961-2014	գծմ	17.1	8.725	149.198
				VIII Ընդամենը	***27875.300***
	IX Հավաքովի ե/բ 30x34սմ վաքեր				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^3	72.54	10.656	772.986
2	Ե/բ 30x34 վաքերի տեղադրում	գծմ	1116	18.803	20984.148
3	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ^2	1406.16	1.353	1902.534
4	Գոյություն ունեցող 30 x 30 սմ վաքերի ապոմոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	մ^3	95.36	23.494	2240.388
5	Հավաքովի բետոնե անվտանգության եզրաքար 15x30սմ ԳOUS 32018-2012. ԳOUS 32961-2014 - միաձույլ բետոնե հիմք B-15 1գծմ-0.035 մ3 - ավազակոպճային շերտ h=5սմ 1գծմ-0.0125 մ3	գծմ	550	8.104	4457.200
6	Մետ. խողովակներ Ø 273/5մմ տեղադրում	գծմ	29.5	44.34	1308.030
7	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^3	0.513	10.656	5.467
8	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)Ø273մմ	գծմ	29.5	1.755	51.773
9	Խողովակը վաքի հետ միացման միաձույլ բետոն B-20	մ^3	0.24	126.713	30.411
10	Միաձույլ բետոնե B-20 գլխամասի կառուցում Կմ 47+952	մ^3	0.4	126.713	50.685
11	Գլխամասի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ^2	1.5	1.353	2.030
				IX Ընդամենը	***31805.651***
	X Ճանապարհի կահավորում				
	1 Ճանապարհային նշաններ				
	Նոր ճան. նշանների տեղադրում. այդ թվում՝				
1	- նախազգուշացնող	հատ	17	25.62	435.540
2	- առավելության	հատ	14	30.967	433.538
3	- հատուկ թելադրանքի	հատ	12	27.848	334.176
4	- տեղեկատվության	հատ	1	10.025	10.025
5	Բետոն B-15	մ^3	3.57	55.422	197.857
6	Կանգնակ մետ. խող. 57մմ/4մմ	գծմ	106.4	7.199	765.974

7	Գոյություն ունեցող ճան. նշանների ապամոնտաժում	հատ	4	5.898	23.592
	2 Գծանշում				
1	Գծանշումը տաք թերմոպլաստով ապակե գնդիկների ավելացումով h=3մմ ընդհանուր մակերեսը այդ թվում՝	մ²	274.28	10.829	2970.178
	3 Մետաղական Արգելափակոց				
1	Ազդանշանային սյուներ (պոլիմերային) C-1 տեղադրում	հատ	15	5.9	88.500
				Χ Ընդամենը	***5259.379***
				Ընդհանուրը	***223,648.498***
				Ընդամենը չնախատեսված ծախսեր	***6,530.709***
				Ամբողջը*	***230,179.207***
				Պայմանագրի 5.1 կետում նշված գինը (ՄԳ)	***192,000.000***

**Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%*

*** Չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պատվիրատուի կողմից կապալառուին տրամադրվող պահուստային միջոցները ենթակա են վճարման՝ վերջինիս կողմից հիմնավորող փաստաթղթերը (կատարողական ակտերի, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձերի եզրակացությունների առկայության) ներկայացվելու դեպքում:*

Հիմք՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման 8-րդ հավելված

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԵՐԶՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան
շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
ՀՀ 20501220115310001
ՀՎՀՀ 05800698
Տնօրեն՝ Ա. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2
«02» 04 2025թ. կնքված
«ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/6Շ-2» ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 2

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-7, /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ47+100-կմ48+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

Հ/հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 75 օր
1	Հողային աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 35 օր
2	Կողային առուներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 40 օր
3	Երթևեջելի մաս	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 65 օր
4	Կողնակներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 70 օր
5	Իջատեղեր և մուտքեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 70 օր
6	Մայթեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 60 օր
7	Վաքեր	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում

		կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 50 օր
8	***Անվտանգության էլեմենտներ***	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 75 օր
Ընդհանուրը		***Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո***	***Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 75 օր***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ
ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան
շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
ՀՀ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698
Տնօրեն՝ Ա. Ադամյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
« 02 » 04 2025թ. կնքված
«ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/6Շ-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45231177/523	Մ-7, /Մ-3/ - Սպիտակ – Գյումրի - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ47+100-կմ48+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	192 000 000

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ

ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան
շրջկենտրոն
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
ՀՀ 2050122011531001
ՀՎՀՀ 05800698
Տնօրեն՝ Ա. [illegible]

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 4
«02» 04 2025թ. կնքված
«ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/6Շ-2» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«02» 04 2025թ. կնքված
«ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2025/6Շ-2» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն